

Շարունակուած Բ. Էջէն

ԸՍՏ ԷՏՈՒԱՐՏ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ «ՅԱՅԱՍԱՆՈՂ ԶԳՏՈՒՄ Ե ԼԻԱԿԱՏԱՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՍԱՏԵԼ ԹՈՒՐԲԻԱՅԻ ՅԵՏ ԱՌԱՆՑ ՈՐԵԷ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ»

ՀՐԱՅՐ ԶՕՐԵԱՆ. - Կարծիք կայ, որ Յայաստանը գնում է Թուրքիայի հետ յարաբերութիւններ հաստատելուն, քանի որ Կրաստանում անցեալ տարի տեղի ունեցած իրադարձութիւնները եւ համաշխարհային տնտեսական ճգնաժամը Յայաստանին այլ ելք, կարծես թէ, չեն թողել: Եւ Յայաստանը ստիպուած է լեզու գտնել Թուրքիայի հետ:

ԷՏՈՒԱՐՏ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ. - Դուք շատ լաւ գիտեք, որ Յայաստանի Յանրապետութեան նախագահի նախաձեռնութիւնն արուել է ամիսներ առաջ, Օսթիայի շուրջ այդ իրադարձութիւններից ամիսներ առաջ ու նաեւ՝ երբ արել էր այդ նախաձեռնութիւնը, Յայաստանի տնտեսութիւնը զարգանում էր երկնիչ թուելով, ինչպէս եւ նախորդ տարիների 7-8 տարւայ ընթացքում: Այնպէս որ, այդպէս չէ. այդ որոշումն արուել է ամբողջ գիտակցութեամբ, որ մենք պետք է կարգաւորենք մեր յարաբերութիւնները Թուրքիայի հետ:

ՀՐԱՅՐ ԶՕՐԵԱՆ. - Ճանապարհային քարտէզ հասկացութիւնը մի տեսակ շփոթութիւն է առաջացրել, ինչ էլ իրենից ներկայացնում այդ փաստաթուղթը: Ի՞նչ դրոյթներ, սկզբունքներ է պարունակում:

ԷՏՈՒԱՐՏ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ. - Գիտեք ինչ, սա շատ պարզ համաձայնութիւն է. ճանապարհային քարտէզ՝ դա ժամանակակից ուղեցոյց է այն քայլերի, որոնք պետք է իրականացնեն կողմերը, որպէսզի ձեռք բերուելիք պայմանաւորութիւններն ու միջ դրուեն եւ սկսեն իրականացուել, եւ այդ քարտէզի մէջ որեւէ դրոյթ կամ սկզբունք չկայ: Դրոյթները եւ սկզբունքները կը լինեն այն պայմանագրի կամ պայմանագրերի մէջ, որոնք պետք է ստորագրուեն երկու կողմերի միջեւ:

ՀՐԱՅՐ ԶՕՐԵԱՆ. - Ինչպէ՞ս կը մեկնաբանեք միջազգային արձագանգները հայ-թուրքական յարաբերութիւններին:

ԷՏՈՒԱՐՏ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ. - Գիտեք, եթէ մենք ապրեինք Սովետական, Խորհրդային Միութեան օրերին, կ'ասեինք, որ ամբողջ առաջադէմ մարդկութիւնը ողջունում է Յայաստանի քայլերը: Բայց այսօր մենք, իսկապէս, կարող ենք ասել, որ բազմաթիւ երկրներ, Եւրոմիութիւնը, Միացեալ Նահանգները, Ռուսաստանը, Չուիցերիան, որը միջնորդի դեր է կատարել, կարծում են, կարելի է ասել՝ գրեթէ երկրի չկայ, որը ոչ միայն չի ողջունում, այլ նաեւ ամբողջ իր աջակցութիւնը չի ցուցաբերում այս գործընթացին: Միգուցէ, մի երկիր կայ, որը մի փոքր վերապահումներ ունի, միգուցէ, եւ ոչ փոքր. դա Ատրպէյճանն է: Դա էլ կարծում են, սխալ մօտեցում է, որովհետեւ, հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը միայն դրական ազդեցութիւն կարող է ունենալ մեր ամբողջ տարածաշրջանի վրայ, իսկ Ատրպէյճանը մասնիկ է այդ տարածաշրջանի:

ՀՐԱՅՐ ԶՕՐԵԱՆ. - Ինչպէ՞ս էք մեկնաբանում Միացեալ Նահանգների նախագահ Պարք Օպամայի հայերին յղած ուղեբերում «Մեծ Եղեռն» բառակապակցութեան օգտագործումը:

ԷՏՈՒԱՐՏ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ. - Նախ եւ առաջ ասեմ, որ նախագահ Օպամայի յայտարարութիւնը քայլ էր առաջ Միացեալ Նահանգների միւս նախագահների կողմից այդ կապակցութեամբ արուած յայտարարութիւնների համեմատութեամբ: Այդ յայտարարութեան մէջ շատ ուժեղ դրոյթներ կան: Նախագահ Օպաման ասաց, որ ինքը բազմիցս արտայայտուել է 1915թ. դեպքերի վերաբերեալ եւ ինքը չի փոխել իր կարծիքը: Նախագահ Օպաման օգտագործեց «Մեծ Եղեռն» բառակապակցութիւնը, մենք ինքներս՝ հայերս, օգտագործում ենք թէ «գեղոցիդ», թէ «Մեծ Եղեռն» հասկացողութիւնները: Բայց ի հարկէ, հայութիւնը սպասում էր, որ Միացեալ Նահանգների նախագահը կ'օգտագործի «գեղոցիդ» բառը: Զանի որ խօսում ենք Միացեալ Նահանգների նախագահի մասին, եւ կը ցանկանայի նաեւ շեշտել այն կարեւոր անձնակազմի աջակցութիւնը, որը Միացեալ Նահանգների նախագահը ցուցաբերում է հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորմանը (դարձեալ Յայաստանի քաղաքականութիւնը մշակող կարեւորագոյն անձնակազմի իբրեւ, Նալպանտեան կը խուսափի «ցեղասպանութիւն» բառի քաղաքական եւ իրական կապակցութեան մասին խօսելէ:

ՀՐԱՅՐ ԶՕՐԵԱՆ. - Վերջին շրջանում բաւական ակտիւացել է բանակցային գործընթացը ԵԱԿԿ Միւսքի խմբի շրջանակում: Համախառնապահներն ամիսը մէկ անգամ այցելում են տարածաշրջան, Երեւան, Ստեփանակերտ, Պաքո, նաեւ առանձին այցեր են ունենում: Այդուհանդերձ, տպաւորութիւն կայ, որ գործընթացը դոպում է տեղի: Դուք համաձայն էք այդ կարծիքին:

ԷՏՈՒԱՐՏ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ. - Տա համաձայն եմ այն կարծիքին, որ այդ, այսօր էլ համանախագահները Երեւանում են գտնուում, գործընթացը շարունակուում է, գիտեք, որ ամիսներ շարունակ Ատրպէյճանը մերժում էր բանակցութիւններ վարել Մատրիտեան առաջարկների սկզբունքների հիման վրայ եւ փորձում էր պարտադրել այն բանաձեւը, որն ընդունուեց ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի կողմից Ատրպէյճանի առաջարկով: Բայց, գիտեք նաեւ, որ առանախա-

գահող երկրները քուտարեցին դէմ, Եւրոմիութեան որեւէ երկիր չաջակցեց այդ բանաձեւին, եւ 192 անդամ երկրներից միայն 39-ը քուտարեցին կողմ:

Այդ բանաձեւը Ատրպէյճանն ամիսներ շարունակ փորձում էր պարտադրել որպէս բանակցութիւնների հիմք: Ատրպէյճանը միայն մէկ սկզբունքի մասին էր խօսում ամիսներ շարունակ. տարածքային ամբողջականութեան, Ատրպէյճանից հնչում էին ռազմատեղէյ յայտարարութիւններ:

Վերջին շրջանում ամիսներ շարունակ բազմաթիւ յայտարարութիւններ են ընդունուել միջազգային կազմակերպութիւնների կողմից, տարբեր ստեաններում, որոնք համահունչ են մեր դիրքորոշումներին: Վերջին ամիսներ ընթացքում որեւէ բանաձեւ չի ընդունուել Դարաբաղի հարցի վերաբերեալ, որը չի ամապատասխանի մեր դիրքորոշումներին. լինի դա Մոսկուայի հռչակագիրը, որի տակ դրուել են ստորագրութիւնները Յայաստանի Յանրապետութեան նախագահի, Ատրպէյճանի նախագահի եւ նաեւ Ռուսաստանի նախագահի, չնայած դրան՝ մի քանի օր անց Ատրպէյճանը հարցականի տակ դրեց մի քանի դրոյթներ այդ հռչակագրի: Երեք հռչակագիր ընդունուեց Յէլսինքիում Դեկտեմբերի սկզբին. դա ԵԱԿԿ 56 նախարարների կողմից, նաեւ եռանախագահող երկրների արտգործնախարարութիւնների ղեկավարների կողմից եւ Եւրոմիութեան կողմից: Եւ այդ երեք յայտարարութիւնները, հռչակագրերը համահունչ են մեր դիրքորոշումներին, եւ մենք լիովին կ'իսում ենք այն կարծիքները, որ արտայայտուած են այդ յայտարարութիւնների մէջ եւ աջակցում ենք ու զուտում, որ եթէ շարժուենք համահունչ այդ ընդունուած փաստաթղթերին, ուրեմն, միգուցէ, մենք առաջընթաց կ'ունենայք: Տարուայ սկզբին Ատրպէյճանը փորձեց են որոշ քայլեր անել ՄԱԿ-ում, ապակառուցողական քայլեր, սկսեց տարածել յուշագրեր՝ չորս յուշագիր, որոնք փաստօրէն, եւս մէկ կարեւոր խոչընդոտ ստեղծեցին բանակցային գործընթացում: Եռանախագահող երկրները դատապարտեցին այդ քայլերը: Այսօր որոշ դրական միտում կայ Դարաբաղի գործընթացի մէջ, որովհետեւ նոյն Ատրպէյճանի նախագահը յայտարարում է արդէն Դարաբաղի հիմնական լուծման մասին միջազգային իրաւունքի սկզբունքների հիման վրայ, այսինքն՝ բոլոր սկզբունքների հիման վրայ: Եւ դա իսկապէս, կարեւոր դրական միտում է: Երեք հանդիպում է կայացել Յայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների միջեւ Սենթ-Փետրսպուրկում, Մոսկուայում եւ նաեւ Ցիւրիխում եւ մօտակալ ժամանակ, միգուցէ դա կը լինի Մայիս ամսին, եւս մէկ հանդիպում կը կայանայ Յայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների միջեւ: Մենք յուսով ենք, որ այդ հանդիպումը դրական ու կառուցողական կը լինի եւ հնարաւորութիւն կը ստեղծի ակտիւացնել բանակցութիւնները, զեւ առաջ եւ առաջիկայում մօտեցնել դիրքորոշումները համարաբարութեան կողմերի միջեւ:

ՀՐԱՅՐ ԶՕՐԵԱՆ. - Տարբեր մեկնաբանութիւններ, վերլուծութիւններ են հնչում հայ-թուրքական յարաբերութիւնների, դարաբաղեան խնդրի կարգաւորման առնչութեամբ, ինչը խառնաշփոթութիւնների առիթ է տալիս. ես յուսով եմ, որ մեր այս հարցաթղթը բաւական հարցերի պարզաբանում տուեց:

ԷՏՈՒԱՐՏ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ. - Եթէ թոյլ տաք, կը ցանկանայի ասել, որ բաւական ուշադրութեամբ եմ մօտենում բոլոր այն կարծիքներին, որոնք արտայայտում են վերլուծաբանները, եւ փորձում եմ օգտագործել այն դրական առաջարկները, գաղափարները, որոնք պարունակում են այդ վերլուծութիւնների մէջ: Բայց նաեւ կան վերլուծութիւններ, որոնց մէջ ասում է. չգիտեմք՝ ինչ էք անում, բայց ինչ-որ անում էք, սխալ էք անում: Սխալ էք անում, որովհետեւ մենք չենք այդ անում: Իսկ ինչ մենք կ'անեինք, մենք ձեռք չենք ասի: Դա նմանացնում է, գիտեք, այն մարդուն, որն ասում է ես ջրի մէջ չեմ մտնի, մինչեւ լողալ չսովորեմ: Եւ այդպէս էլ լողալ չսովորելով՝ ափին կանգնած խորհուրդներ է տալիս կամ դատողութիւններ է անում խեղդուելու վտանգների մասին:

Պետութեան ղեկավարութիւնը պետք է համարձակութիւն ունենայ պատասխանատուութիւն վերցնել իր վրայ եւ կարեւոր որոշումներ ընդունել ու իրականացնել այդ որոշումները: Այսօր միջազգային հանրութիւնը յարգանքով է մօտենում Յայաստանին: Ես ասում եմ յարգանքով եւ չեմ օգտագործում յուզական խօսքեր՝ մեզ սիրում են, կամ մեզ չեն սիրում. յարգանքով եմ մօտենում: Յարգանքով եմ մօտենում, եւ դա գիտեք, բնական է, բնական է այն իմաստով, որ մենք պետութիւն ենք, մենք ունենք մեր շահերը, ունենք մեր խնդիրները, եւ նաեւ փորձում ենք հասկանալ այլ երկրների խնդիրները, շահերը: Եւ փորձում ենք, համադրելով այդ շահերը, այնպիսի լուծումներ գտնել, որ բոլորի համար լինեն լաւ: Եւ առաջին հերթին մեզ համար, կարեւորը՝ որ դրանք արդիւնաւետ լինեն եւ բարեկամ լինեն, եւ ի շահ լինեն մեր ժողովրդի, մեր պետութեան:

ԺԵՏՈՒԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐԲԻԱՆ ՄԻԼԻՈՆՆԵՐ Է ԾԱԽՍՈՒՄ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՈԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այնուհետեւ շարունակելով՝ նա ասել է. «Եթէ նրանք, ովքեր ինքնապաշտպանում են՝ անցնելով պաշտպանութեան սահմանը, եւ վրէժի են ձգտում, ինչպէս սովորաբար տեղի է ունենում պատերազմներում, ապա նրանք պետք է բացառապէս ու քննադատուեն: Բայց ամենից շատ պետք է մեղադրել նրանք, ովքեր սկսել են պատերազմը, նրանք, ովքեր իրականացրել են առաջին չարագործութիւնները եւ նրանք, ովքեր արդիւնաւորութեան պատճառ են դարձել: Հայ ազգայնականները, հայ յեղափոխականներն են սկսել բախումները: Մեղքը նրանց վրայ է»:

ԹՈՒՐԲԻԱՆ ՏԵՍԱԿԵՏԻ ՊԱՐՏԱԴՐՈՒՄ

Ֆրանսիայում եւ Չուիցերիայում Հայոց Յեղասպանութիւնը հերքելը յանցանք է: Թուրքիայում յանցանք է այն հաստատելը:

2005թ. ուժի մէջ մտած՝ Թուրքիայի քրեական օրէնսգրքի 301 յօդուածով անօրինական է համարում Թուրքիայի ուեւ քաղաքացու կամ բնակչի կողմից Հայոց Յեղասպանութեան հաստատումը: Այս օրէնքով՝ «թրքութիւնը վիրաւորելու» մեղադրանքով բազմաթիւ լրագրողներ ու գիտնականներ են դատապարտուել՝ սկսած Նոպլեան մրցանակակիր Օրհան Փամուքից, որը մեղադրուեց հետեւեալ յայտարարութեան համար. «Մէկ միլիոն հայ է սպանուել այս հողերում»: Թուրքիայ թրքի խմբագիր Յրանդ Տիւնքի դէմ երեք անգամ մեղադրանք է յարուցուել Հայոց Յեղասպանութիւնը մերժելու Թուրքիայի կառավարութեան երկարատեւ քաղաքականութիւնը քննադատելու համար:

Մինչ օրէնքն անկարող էր լռեցնել Տիւնքին, դա արեցին փամփուշտները: Անցած տարուայ Յունարին նա սպանուեց Ստամպուլի կենտրոնում գտնուող իր գրասենեակի մօտ, թուրք ծայրայեղ ազգայնականի արձակած կրակոցից: Հետագայում հրապարակուած տեսագրութիւնում եւ լուսանկարներում երեւում էր, թէ մարդասպան ինչպէս է ցնծում Թուրքիայի դրօշի առջեւ, կողքին ոստիկաններ՝ լայն ժայտը դեմքերին:

Տիւնքի ընկերն ու գաղափարական դաշնակիցը, թուրք ակնաւոր պատմաբան, սոցիոլոգ, Միլետթայի համալսարանի Ռոջակիզման եւ ցեղասպանութեան ուսումնասիրութիւնների կենտրոնի փրոֆեսոր Թաներ Աքչամը, չնայած իր կենսաթիւն սպառնացող լուրջ վտանգին, մասնակցեց Թուրքիայում Տիւնքի յուրաքարկարում:

ՀԵՏԱԲՐԲՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄՈՐԻՍ ԹՐԻՈՒՇ ԾԻՉԵՅԱԿ

Ֆրանսական դասական գրականութեան ծանօթ դէմքերէն Մորիս Թրիուս մահացաւ: 91-ամեայ գրողը նաեւ եղած է ֆրանսական Դիմադրութեան մէկ անդամը:



ՄԵԼ ԿԻՊՍԸՆ ԱՊԱՅԱՐԶԱՆԻ ԱՌՋԵԷ

Հոլիվուտի աստղերէն Մել Կիպսըն իր կնոջ հետ 28 տարեան համատեղ կեանքէն տար, անոր հետ անընդհատ տարածալուծութիւնները պատրուակելով, ամուսնալուծումի դատարան ներկայացաւ: Տիւնքի Ռոպին Կիպսըն, պիտի ստանայ շուրջ 640 միլիոն տոլար գնահատուող իր կենսաբանութեան կէս գումարը: Լշէնք, թէ Մել եւ Ռոպին Կիպսըն ամուսնացան 1980-ին: Ամուսնուին եօթ գաւակներ:

ՖԱՐԱՀ ՖՈՍԵԹ ԿԸ ՊԱՅՔԱՐԻ ԲԱՂՅԿԵՂԻ ԴԵՍ

70-ական թուականներու «Չարլիզ Էյնըլը» արկածախնդրական հաղորդաշարի գլխաւոր դերասանուհիներէն Ֆարահ Ֆոսեթ յամառ պայքար մը կը մղէ քաղցկեղի հիւանդութեան դէմ: 62-ամեայ դերասանուհին, Գերմանիայէ վերադարձած Լոս Անձելէսի իր բնակարանը:

Լշէնք, թէ վերջին 18 ամիսներու, Ֆոսեթ անընդհատ կը մեկնէր Ֆրանսէֆորթ, բուժման ենթարկուելու նպատակաւ: Դերասանուհին այժմ կ'ապրի իր երեկի կողակիցներէն Ռայըն Օնիլի հետ: Ամուսնուին 24-ամեայ մանչ մը՝ Ռետմընտ:

